## ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Անցեալ ամսոյ վերջերը տեղւոյս Կառավարիչը գնաց 'ի Պէյրութ և անտի 'ի Դամասկոս . չը գիտցուիր , թէ ինչ պատճառ ունի Կառավարչի այս ուղեւորութիւնը ։

— Ամսոյս՝ Կառավարութեան Դուռը յանձնաժողով մի կազմուեցաւ ընդ նախագահութեամբ Պէյրութի Պէլէտիյէի ժողովոյ Նախագահին . կան այս յանձնաժողովին մէջ և քրիստոնեայ անդամներ կըսուի թէ սորա պաշտօնն է կառավարչի գործոց քննութիւնը ։

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

### ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ
### ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Գ. Ս. ԽԱՊԱՅԵԱՆ

ՅՈՒԽՏԷՆ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Այս դասագիրքը պատրաստուած է Ազգ . Դպրոցաց համար պարզ լեզուաւ և դիւրըմբռնելի եղանակաւ . կը բաղկանայ 245 երեսէ . ունի երեք տախտակ ձեւերու և կը վաճառուի 'ի գին 8 ղրուշ մաքուր ստակ ։

Դասագրքին պարունակութեան և ընթացքին վրայ աւելի ամփոփ գաղափար մի տալու համար , յառաջաբանը կը դնեմք աստ ։

ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ . որ կ'ուսուցանէ գլխաւորաբար մեր մոլորակային դրութեան կազմութիւնը և կը բացատրէ այն օրէնքները , որով այս երկնային մարմինները , ընդ որս և մեր երկիրը իբրեւ մոլորակ , կը կառավարուին , կարեւոր ուսումներէն մին է . Հարկ չեմք տեսներ այս տեղ ընդարձակօրէն թուել անոր օգուտները և կարեւորութիւնը . բաւական է գիտնալ , որ այս ուսումը ներկայ դարուս սկիզբէն յառաջադիմական մեծամեծ քայլեր առաւ . տիեզերախօսական շատ ճշմարտութիւններ պարզուեցան . բազմաթիւ եւ օգտակար գիւտեր եղան . այս ամէնը՝ այն ուսման կարեւորութեան ապացոյցներ են ։ Մարդը , որ առաջ զինքը շրջապատող երկնային երեւոյթներուն անտեղեակ էր , և շատ անգամ բնական երեւոյթ մի շատ ազգեր տգիտութեան պատճառաւ մեծ արհաւիրաց մէջ կը ձգեր , այսօր շնորհիւ այս ուսման գիտէ և կը մեկնէ այդ երեւոյթներուն պատճառը . գիտէ մոլորակային դրութիւնը կազմող մարմնոց բնական և աստղաբաշխական կազմութիւնը . գիտէ անոնց շարժումներն և շարժմանց տիրող օրէնքները և գիտէ վերջապէս նոյն խորախորհրդին հեռաւորութիւնը և մեծութիւնը . Ահաւասիկ համառօտիւ Տիեզերագրութեան օգուտները ։

Գիտութիւն մի , երբ բաց 'ի շոր ու ցամաք ծանօթութիւններէ , կամ բաց 'ի մտաց զուարճացումէն , չը բաւականացներ մարդոյ սիրտը և չը լուսացներ նորա հոգին երկնային զմայլմամբ և զարմացմամբ , 'ի կարեւորացն է , բայց ոչ 'ի կարեւորագունից . Այս համեմատութեամբ աւելի պարզ կ'երեւի Տիեզերագրութեան՝ միւս բնական ուսումներէն ունեցած գերազանցութիւնը . վասն զի ոչ ուսումն է աւելի արժանի մարդոյ խոկմանց . աւելի ընդունակ նորա սիրտը և հոգին լցուցանելու երկիւղած զարմացմամբ և կրօնական սուրբ զգացմամբ . քան հըրաշակառոյց տիեզերաց . քան ուսումն լուսաւոր աստեղաց . որք անդադար կը թաւալին մեր գլխուն վրայ . 'ի մի բան քան ուսումն Երկնից . որ ըստ Մարգարէին պատմեն զփառս Աստուծոյ եւ զարարածս ձեռաց նորա ։

Այսու համոզմամբ կը յուսամք թէ մեր ներկայ աշխատութեամբ եթէ ոչ առաջին , գոնէ կարեւոր և օգտակար գործ մի նուիրեցինք ուսումնասէր Հայ—մանկտւոյն . Թէեւ մեզմէ շատ առաջ այլք փութացած են այս ծառայութեան մէջ . սակայն մեր գլխաւոր ջանքն եղած է աւելի նորագոյն եւ կարեւորագոյն ծանօթութիւններով ճոխացնել եւ կանոնաւոր ու բնական կարգաւ մի՝ ուսումնը դիւրամատչելի ընել ։ Այս նպատակաւ՝ ուսման նիւթին համեմատ վեց գլուխներու բաժնեցինք . առաջին՝ ԵՐԿԻՐԸ ըրինք , որ մեզ ամենամերձաւորն և մեր բնակութեան տեղին է . երկրորդ՝ Հաստատուն աստեղք . երրորդ՝ Արեգակն . չորրորդ՝ Լուսինը . հինգերորդ՝ Մոլորակային դրութիւն . վեցերորդ՝ Տոմար . և ամէնէն վերջը՝ քանի և մի խնդիրներ յաւելցուցինք ուսանողաց կրթութեան համար նոյն իսկ դասագրքէն քաղուած , զոր ուսանողք առանց արուեստական գունտի իբրեւ Թուաբանական խընդիրներ պիտի լուծեն . Ամենէն աւելի խնդրոց լուծումը պիտի հրաշխաւորէ ուսանողաց վճռակը . վասն զի երբ ուսման բուն նպատակն չէն կատարուած , անպատճառ պիտի տկարանան խնդրոց լուծման մէջ ։ Աւ այս կը խնդրեմք , որ Ուսուցիչք առաջնորդեն ուսանողաց . դասագրքին մէջ շատ տեղեր միայն թիւեր դրուած են առանց մանրամասն հաշւոց իբրեւ վերջնական արդիւնք . պէտք է որ ուսանողք իրենք իրենց փորձեն գործողութեամբք անոնց ստուգութիւնը ։

Որչափ որ մեր այս գործը զանազան թերութիւններէ զերծ չէ . սակայն կը յուսամք , որ Մեծարգոյ Ուսուցիչք պիտի ընդունին ներողամիտ ագւով և համակրութեամբ , որով եթէ Հայ—մանկըտւոյն սակաւ ինչ օգտի . մեզ՝ մեր աշխատութեան վարձն ու պսակը լիովին ստացած կ'ըլլամք ։

digitised by A.R.A.R.@